ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍՅԱՆԻ «ՃԱԿԱՏԱԳՐՈՎ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՆԵՐԸ» ՎԵՊԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԳԾԵՐԸ

Ազատության ու անկախության համար ֆաշիստական զավթիչների դեմ մղված ազատագրական պատերազմին մյուս ժողովրդների հետ միասին անձնվեր մասնակցություն բերեց նաև հայ ժողովուրդը: Սրբազան պայքարի այդ օրերի մասին այսպես է արտահայտվել ականավոր գրող Ալեքսեյ Տոլստոյը. «Մեր բույնը, մեր հայրենիքը տիրապետում է մեր բոլոր զգացմունքներին և այն ամենը, ինչ որ տեսնում ենք մեր շուրջը, և այն ամենը, ինչ առաջ մենք գուցե և չէինք էլ նկատում ու գնահատում որպես ծյունածածկ խրճիթից բարձրացող հաճարի, հացի բուրմունքով հագեցած ծուխ, գերազանցորեն թանկ է մեզ համար: Մեր բոլոր մտքերը նրա հետ են, մեր ամբողջ ցասումն ու զայրույթը ուղղված է նրան անարգելու դեմ, և մենք պատրաստ ենք մեռնել նրա համար»[1]:

Վաթսունական թվականներին հասարակական կյանքում տեղի ունեցած տեղաշարժերը իրենց անմիջական ազդեցությունն ունեցան գրականության վրա: Պատերազմական արձակի երկրորդ շրջանի երկերում տիրապետողը իրականության վերարտադրման, կյանքի արտացոլման, պատերազմական առօրյայի պատկերման սոցիալ-հոգեբանական հայեցակետն է:

Ժողովուրդների բարեկամության, հայրենիքի հզորության, խորհրդային զինվորի նկարագրությունները արտացոլվեցին հոգեբանական նոր կողմերով, գեղարվեստական խոսքը դարձնելով առավել ճշմարիտ: Այս շրջանի գրականության մեջ հոգեբանական վերլուծության ենթարկվեց պատերազմական կյանքի սովորական առօրյան, կռվող զինվորի մարդկային նկարագիրը, կյանքի բուն ճշմարտությունը: Հայրենական պատերազմի գեղարվեստական արտացոլման այս նոր որակը պայմանավորեցին խորհրդային մի շարք գրողներ, որոնց մեջ նշանակալից տեղ է գրավում Մկրտիչ Սարգսյանը: Հայրենական Մեծ պատերազմը հայ ժողովրդի գոյու-

թյունը նորից հարցականի տակ դրեց: Ահա թե ինչու, ֆաշիզմի դեմ պայքարի թեման նրա արձակում դրվում է որպես հայ ժողովրդի ազատագրական երկարամյա կռիվների օրգանական շարունակություն: «Ճակատագրով դատապարտվածներ» վեպում Մկրտիչ Սարգսյանը պատկերել է պատերազմի մի դրվագը: Վեպի մասին Վիգեն Խեչումյանը գրում է. ««Ճակատագրով դատապարտվածներ» վեպը էպիկական մի հերոսապատում է Հայրենական մեծ պատերազմում գերի ընկած ֆաշիստական ճամբարներում տառապած և հայրենիքին երբեք չդավող հայ զինվորների մասին: Նրանք՝ մի վաշտ, թշնամու համազգեստ են հագել ճամբարում, սակայն ռազմաճակատ բերվելով, պոկվել են գերմանացիներից և միացել օկուպացված Ուկրաինայում գործող պարտիզանական բրիգադին: Խորհրդային հայրենիքի համար թշնամու թիկունքում, գոռ մարտերի մեջ ընկնում է ամբողջ վաշտը, քաջերի մահով հաղթելով մահին և պսակելով իրեն անմահների անունով»[2]:

Վեպն սկսվում է մի տողով, որ վիպական հյուսվածքում կրկնվում է հաճախ՝ «Իսկ վաշտը բաց տեղանքով շարժվում է առաջ»: Սա ոչ միայն միահյուսում է վեպի կերպարներն ու պատկեր-հատվածները, այլև ահազանգ, որ հերոսական հայկական մի վաշտ բաց տեղանքով գնում է ճակատելու ոտքից գլուխ սպառազինված ահավոր ու նենգ ոսոխի հետ: Ոչ միայն ճակատելու, այլև նահատակվելու ու հերոսանալու:

«Ճակատագրով դատապարտվածներ» վերնագիրը հուշում է վեպի սյուժեն - այն երևում է հենց վեպի առաջին տողերից, երբ հեղինակը պատերազմական տխուր պատկերով էլ սկսում է պատմել ռմբահարված գյուղերի, քաղաքների, խաչերի և գերազմանոցների մասին:

Ինչպես նշվեց, հայկական այս լեգեոնը կազմավորվել է գերիներից՝ համակենտրոնացման ճամբարում, և ուղարկվել... յուրայինների դեմ: Լեգեոնի երկրորդ վաշտի ղեկավարությունը անցել է Վահան Չոբանյանին, որը գերմաներենին տիրապետում է մայրենի լեզվի պես: Ազնիվ, արդար, հայրենասերների մի ամբողջ վաշտ, բայց... ճակատագրով դատապարտված...

Շատերին է հայտնի հայկական նման վաշտերի գոյության մասին, որոնք կռվեցին և հաղթանակով տուն դարձան՝ հերոսի պատվաբեր անվամբ: Սակայն հայ գերիների համար այդ պատերազմը եղավ մարտական,

գաղափարական և մարդասիրական դպրոց, ուր դժվարին քննություն բռնեցին հայ մարտիկները և վերջում նահատակվելով դարձան հավերժության ճամփորդներ ցույց տալով անհուն հայրենասիրության ու քաջության անօրինակ սխրանքներ: Երդվելով ռայխին, հայ զինվորը ցանկացավ իր ճակատից սրբել «դավաճանի» անարդար խարանը և ռազմագերուց վերածվելով կռվող զինվորի պայքարեց անձնուրաց, դրանով կատարելով եռակի, քառակի սխրանք, ապացուցելով, որ հայը անդավաճան մարտիկ է, անհուն հայրենասեր և նվիրված ընդհանուր, սրբազան գործին: «Ինչպես Ալեքսանդր Ֆադեևի. «Ձախջախում» ստեղծագործության մեջ,- գրում է Սևակ Արզումանյանը,- նահատակությունը ընկալվում է իբրև կյանքի հաստատում, Վահան Չոբանյանի և նրա ընկերների մահը հնչում է ոչ միայն որպես եղերերգ, այլև որպես կյանքի հաստատման հիմն, որպես ապոթեոզ»[5]:

Ըստ իրենց դերի և բնավորության տարբեր ու բազմազան են Սարգսյանի հերոսները, սակայն այդ բազմազանության մեջ կա ընդհանուր մի բան. դա նրանց անօրինակ բարձր գիտակցությունն է պայմանավորված մեր հայրենիքի համար բախտորոշ գոտեմարտում իրենց դերի խոր ըմբռնումով: Այդ բարձրագույն առաքինությունն էլ հենց «Ճակատագրով դատապարտվածներ» վեպի հերոսներին տալիս է բնավորության խորություն ու վեհություն, հմայք ու գեղեցկություն: Վեպը լայն ընդգրկում ունեցող ստեղծագործություն է: Գրականագետ Կիմ Աղաբեկյանը գրում է. «Ճակատագրով դատապարտվածներ» վեպի հերոսներն իրենց գործունեությամբ խտացնում են մի ողջ ժողովրդի դարերի մեջ ստուգված հավատարմությունը իրենց ընդհանուր նպատակին: Գրողը հայ ռազմագերիներից բաղկացած բազմաթիվ վաշտերից մեկի անցած ճանապարհի գեղարվեստական վերարտադրմամբ հասնում է մեր ժողովրդի բնավորության լավագույն գծերի խոր ընդհանրացման»[7]: «Ճակատագրով դատապարտվածներ» վեպի կենտրոնական և հետաքրքիր կերպարը Վահան Չոբանյանն է: Նա արտաքուստ պարզ, բայց բարդ բնավորություն է: Նա խիստ է ու շիտակ, երեխայի նման զգայուն, բարի ու անհիշաչար: Վահանի բնավորության մեջ կան պոետական գծեր, հզոր ու արդարասեր մարդու նկարագիր ունի: Նահանջի դառն օրերին անգամ նա երբեք չի դժգոհում, աստիճանաբար դառնում է փորձառու մարտիկ, իսկական

ժողովրդական վրիժառու, խիզախ հերոս: Վահան Չոբանյանը պատերազմի դաժան փորձությունների մեջ ձեռք է բերում կյանքի խոր ըմբռնում, դառնում հայրենիքի աննկուն, քաջարի մարտիկ: Չոբանյանը ազնիվ հայրենասեր է և նրա բոլոր գործողությունները խարսխված են այդ անհուն հայրենասիրության վրա: Թշնամու նկատմաբ նրա տածած ատելությունը ևս բխում է այդ հայրենասիրությունից: Վահանը անցնում է կյանքի դժվարին ճանապարհ, որը փորձությունների մի դաժան շղթա էր՝ հատկապես աշխարհակործան այդ պատերազմում: Նա հայտնվում է հոգեբանական տարբեր իրավիճակներում, բայց բոլորից էլ դուրս է գալիս արժանավայել: Նա միշտ լուրջ է ու զգաստ, սիրում է կարգապահությունը: Հոգատար է շարքային զինվորների և անողոք՝ թշնամու հանդեպ: Նա հավատարիմ մնաց խորհրդային սպայի իր կոչմանը և մինչև արյան վերջին կաթիլը մնաց որպես իր ժողովրդի արժանի զավակ: Հոգեցունց է առանձնապես վերջին պատկերը, երբ նա վիրավորված է, զգում է մոտալուտ վախճանը: Միտքը գործում է հստակ. չի կարող նահատակվել ֆաշիստական հագուստով. «Ցավից դեմքը կնճռոտելով՝ արագ հանեց ֆրենչը, գլխարկը և դրանք շպրտեց հեռու՞, իրենից հեռու: Վտարեց իրենից թշնամուն, մաքրվեց...»: Վահան Չոբանյանից անբաժան է Վալյայի կերպարը: Նրանց առաջին հանդիպումը ֆաշիստներից հետ գրաված գյուղում էր, երբ Վահանը մտնում է գերմանական հրամանատարի զբաղեցրած սենյակը, և ... նկատում անկողնում պառկած գեղեցկուհուն: Ինչպես վայել է առաքինի հատկություններով օժտված տղամարդուն՝ Վահանը «հիանալի է դիմանում» Վալյայի գայթակղությանը, դեռ ավելին՝ կոպտում է նրան: Բայց Վալյան, սիրելով հայ հրամանատարին, աստիճանաբար վերագտնում է կորցրած արժանապատվությունը, կանացի ինքնասիրությունը: Իրադրության պարտադրանքով նա դարձել էր Օտտո Վիլլի սիրուհին և, իր պատմելով, խորհրդային շատ զինվորների է օգնել՝ ազատելով կախաղանից կամ գերությունից: Վալյայի կերպարը լիարյուն և հետաքրքիր կերպար է: Այդ մասին է վկայում գրականագետ Կառլեն Դանիելյանը. «Մենք տեսնում ենք մի ռուս կնոջ, որ կին է ամեն ինչում: Պատերազմը չի խլել նրանից կանացիությունը, սիրելու երջանկությունը: Նա անցել է ծանր ճանապարհ՝ գերմանական բանակի թիկունքում հայտնված գեղեցիկ կնոջ նավաբեկությունը: Ապա փրկվելով,

հասել է Վահանին խիստ, կամային մի զինվորականի, որ գիտե գնահատել քնքշությունն ու կանացիությունը, բայց որը մաքառում է ինքն իր դեմ, չկոտրվելու, չթուլանալու համար»[5]:

Վալյայի քնքուշ և ազնիվ սիրո մեջ կան քնարական տպավորիչ հույզեր, մարդկային տագնապներ: Նա զոհվեց մաքուր խղճով՝ հավատարիմ իր սիրույն և հայրենիքին:

Վեպում «տեսք ու կերպարանք» են ստանում նաև մյուս հերոսները: Ղարաբաղցի բանաստեղծ Սուրեն Արզաքանյանը բանաստեղծություններ է գրում, վերջում կպարզվի, որ օրագիր էլ էր պահում: Քայլում է բոլորի հետ Սուրենը և հանկարծ իրեն բռնում ստեղծագործական երկունքի մեջ՝ մուսաների բարյացակամ գրկում: «Բայց որովհետև շարքում հնարավոր չէ բանաստեղծություն գրելը կամ օրագրելը, նա հաշվում է քայլերը...»: Ռոմանտիկ երազներով լեցուն է երիտասարդ Սուրենի հոգին: Սուրենը նաև շնորհալի երգում էր: Բայց նա, ինչպես և վեպի յուրաքանչյուր հերոս, ունի իր կյանքը, իր թաքուն ապրումներն ու ճակատագիրը:

Վեպի հերոսները խաղաղ պայմաններում այնքան չեն զգացել սիրո, բնության, կյանքի գեղեցկությունը, որքան այդ դաժան օրերին: Հենց այդ դաժան օրերին է ծնվել տասնիննամյա զինվոր Վարուժանի և կապավոր Մարինա Վասիլչենկոյի սերը: Նրանց ծանոթությունից ի վեր գրողը մի առանձին քնարականությամբ է նկարագրում նրանց՝ օրեցօր ծաղկող սերը:

«Ճակատագրով դատապարտվածներ» վեպի հիմնական կոնֆլիկտը ծավալվում է խորհրդային կողմի և ֆաշիստների միջև: Սակայն վեպում հեղինակը ստեղծում է տարբեր իրավիճակներ և կոնֆլիկտի ներքին շերտերի մեջ ներգրավում այլևայլ հերոսների: Հետաքրքիր կերպարներ են Միհրան և Պարթև Քարտաշյանները: Գրողի տաղանդը հենց նրա մեջ է, որ ընդամենը մի քանի էսքիզով արդեն ներկայացնում է կերպարը: Ճիշտ այդ ձևով է նա վարվել ներքոհիշյալ կերպարների դրամատիզմն ընդգծելու համար: Ո՞վ է Միհրան Քարտաշյանը. հայրենական գիտության հռչակավոր գիտնականներից մեկը, որ հայրենիքի դավաճան հռչակվեց: Պարզվում է, որ նա ժողովրդի թշնամի է, օտարերկրյա մի քանի հետախուզությունների գործակալ: Նրան բանտարկեցին, հետո՝ գնդակահարեցին: Որդին՝ Պարթևը, որ պոլիտեխնիկականի

ուսանող էր, վտարվեց ինստիտուտից և կոմերիտմիությունից: Երբ նրանից պահանջեցին, որ հրապարակայնորեն դատապարտի հորը և նրանից հրաժարվի, ասաց, որ ինքը պրոֆեսոր Քարտաշյանի օրինավոր որդին է: Դրանից հետո Պարթևին չտեսան: Եվ ահա այդ հեռավոր լեհական Վոզնյա քաղաքի ճամբարում նրան տեսնում են: Ընդհատակայինները իրենց մտադրության մասին նրան չէին ասում, զգուշանում էին. նրան հաճախ էին տեսնում ծեծված և արյունլվա, միևնույն է, չէին հավատում ազնվությանը: Եվ ահա երդում տալու օրը, երբ Բրաունը հայտարարում է, թե՝ «ով չի ցանկանում երդում տալ ռայխին, թող հինգ քայլ առաջ անցնի», միայն Պարթև Քարտաշյանը դուրս եկավ շարքից: Նրան անմիջապես գնդակահարեցին: Բոլորը ցնցվեցին, իսկ Վահանի խոհերը, երևի բոլորինն էր. «Այս ի՞նչ արեցինք: Ինչպիսի՜ անմարդկայնություն, ինչպիսի՜... Մենք մինչև վերջ չհասկացանք ու չհավատացինք նրան: Չցանկացանք հասկանալ: Նա մահով վրեժխնդիր եղավ ոչ միայն թշնամիներից, այլև յուրայիններից...»:

Ամբողջ լեգեոնը երդում տվեց, բայց միայն՝ առերես: Բայց դա ավելի շուտ պայքարն ու կռիվը շարունակելու, հայրենասիրության երդում էր: Եվ այդ ամբողջ լեգեոնի հետ չէր միայն Պարթև Քարտաշյանը, որին, դժբախտաբար չհասկացան ընկերները: Առաջին անգամ Վահանը նախանձում էր մեռնողին. «Աստվա՜ծ իմ, նա կարողացավ մեռնել և մահով հաստատեց իր ապրելու իրավունքը: Իսկ մենք կկարողանա՞նք ապրել, մե՞նք...»:

Չնայած վաշտը երբեմն ստիպված նահանջում էր, բայց զենքի ընկերները, որոնց մեծ մասը հայրենակիցներ էին, դառնում են հայրենիքի իսկական, հերոս պաշտպաններ: Հայրենասիրությունը անձնականից վեր կանգնած ըմբռնում է, և ֆաշիզմի դեմ պայքարող մարտիկների քաջության և անձնազոհության ակունքը, նրանց նպատակների միասնության ու բարձր բարոյականության պատվանդանը: Նկարագրված մարտական դրվագները, գրոհների, նահանջների և հակագրոհների մեջ ուրվագծվել են բայազետցի Ադիբեկի, աշնակցի Հարոյի, աշտարակցի Կորյունի, լենինականցի պայտար Մինասի, հայի տարաբախտ ճակատագիր ունեցող Սերգեյ Ավագյանի կերպարները: Հայրենի հողի վրեժը, գերության անլուր տառապանքները, իրենց երբեմնի բարի անունը վերագտնելու բուռն ձգտումը հուզախռով էին արել հայ

մարտիկներին, բորբոքել նրանց տաքարյուն սրտերը: Աշնակցի Հարոն ծնվել է Սասնա Տալվորիկում: Գաղթականի ծանր ճակատագիրը նրան «սովորեցրել» է «կույր կրակ» անելու ձևը: Պետք եկավ պատերազմի ժամանակ, որովհետև թշնամին չպիտի իրենց տեղն իմանար, իսկ տղաներն էլ առաջարկեցին կրակի անունը դնել «պարտիզանի օջախ»:

«Քայլում են հայերը պատերազմի ճամփաներով՝ աչքերի առաջ ունենալով Հայաստանի պատկերը, դադա՞ր է՝ Հայաստանով է լցվում կարճ խաղաղությունը, գրո՞հ է՝ Հայաստանի համար է, երգու՞մ են Հայաստանի մասին է, ոգևորվում են Հայաստանով. «...Եվ հարբում, հարբում են Հայաստանով»: Պարտիզանական բրիգադի կապավոր Զավենի կրծքին գերմանացիները հինգթևանի աստղ են «փորել»: Զավենի տարերքը եղել է աշխատանքը, որը նրա համար ոչ միայն ֆիզիկական գոյությունը պահելու միջոց էր, այլև հոգեկան բավականության աղբյուր: Նրա հոգեկան աշխարհը պատերազմի ժամանակ էլ նույնն էր, որի պատճառով էլ կարողանում է Կատյային ապացուցել, որ ինքը ուրիշ տղամարդկանցից տարբերվում է: Ինչպիսի՞ ափսոսանքով է նայում հավատը կորցրած ռուս կնոջը, որի հարցին, թե վախենու՞մ է գեղեցկությունից՝ մտածում է. «Ո՛չ, Կատյա, ես գեղեցկությունից չեմ վախենում: Ես վախենում եմ մեռնող, սպանվող գեղեցկությունից...»: Միայն այրական կամք և հաստատուն բանականություն, հոգեկան գեղեցկություն ունեցող մարդն է, այդպես «անտարբեր» անցնում իրեն բացահայտորեն կանչող կնոջ մոտով՝ անխաթար պահելով մարդկային իր արժանապատվությունը: Իր հոգեհարազատ ոճի՝ վերհուշի ձևով Սարգսյանը Զավենին տեղափոխում է ծննդավայրը, հիշում է սիրած աղջկան՝ Մանուշակին, նրա մահը ու մահվան մեջ՝ սիրո առաջին գարունը: Եվ քարտաշի աշակերտ Զավենը երկու ամիս քարի վրա քանդակեց իր սիրո ողբերգությունը: Հետո, պատերազմում, նա իր կամքով պետք է Մարինայի շիրմաքարին ջարդված ցողուններով մի զույգ զանգակածաղիկ քանդակի և գրի՝ «Մարինա, հայի հարսնացու»:

Այնուհետև Զավենի մասին պիտի ընթերցենք Սուրեն Արզաքանյանի օրագրում. «Զավենը ցանկանում էր ճարտարապետ դառնալ: Կդառնար անպատճառ, եթե ապրեր: Արկը սպանեց նրան և ջարդափշուր արեց նրա

երազի տունը...»: Սարգսյանը վեպում մեծ տեղ է տալիս բնությանը: Ամեն մի պատկեր վեպում տրված է նպատակային ձևով: Ահա կերոնի պես վառվող ծառը, իսկ ծառին արագիլի բույնն էր: Իհարկե, սա խորհրդանշական պատկեր է: Վառվում է ծառը, իսկ արագիլը վերադառնում է իր բույնը և անհանգիստ հայացքով նայում «խելագարված աշխարհին»: Հայրենասիրական զգացումը, որ ոգեշնչում է հայ մարտիկներին, տանում դեպի անձնազոհություն: Այդ անհուն հայրենասիրությունը համեմատվում է արագիլների «բնապաշտության» հետ: Արագիլների ընտանիքը, որ արկերի ու գնդակների բոցերի մեջ այրվում է, չի լքում բույնը: Ոչինչ չի ընկճում արագիլներին, որովհետև դա իրենց տունն է, հայրենիքը: Բռնկվում է ծառը, մոխրանում են թռչունները, բայց չեն լքում այն բույնը, ուր ծնվել են, իրար սիրել, ձագեր հանել: Կյանքը դուրս է եկել հունից. խեղվում են մարդկային ճակատագրեր, այրվում -մոխրանում են դարերով ստեղծած կառույցներ, եղծվում է ամենայն գեղեցիկն ու բնականը:

Սարգսյանի «Ճակատագրով դատապարտվածներ» վեպը մի երկ է, որի մեջ ցայտուն արտահայտված է պատերազմին մասնակցող մարդու հոգու գեղեցկությունն ու վեհությունը հաստատելու բուռն ձգտումը: Կռվում են հայերը՝ հայրենիքի պայծառ կերպարն իրենց հոգիներում, վստահ՝ հաղթանակի նվաճման մեջ, ամուր բռնած հավատի անդավաճան ձեռքը: Պատերազմական թոհուբոհը, անմարդկային սպանությունները ծանր նստվածք են տվել աշխատանքի մարդկանց սրտերում, նրանք կարոտել են աշխատանքին, խաղաղությանը: Հատկանշական է, երբ մարտական գործողությունների դադարի ժամանակ մարտիկները խնդրում են հրամանատարներին՝ թույլ տալ վարուցանքին մասնակցել:

Վեպի ուշագրավ կերպարներից է քաղղեկ Սերգեյ Ավագյանը: Դժվար է եղել նրա կյանքը: Գյուղում նրան կանչել են Սրքե: Առաջին սերը Զմրուխտն էր, սակայն, այդ «սիրո վրա կեռվել էր թուրքական յաթաղանը»: Սարգսյանի հոգեհարազատ ոճ - վերհուշը մեզ տանում է Սերգեյ Ավագյանի կյանքի հետքերով, երբ նա կռվում էր Անդրանիկ փաշայի բանակում, տեսել է թուրք ջարդարարների արյունարբու սպանդի հետքերը: Նա Անդրանիկի և մյուս քաջերի հետ, վրեժով լի, չոքել է Մայր Հայաստանի հողի վրա և երդվել՝ մինչև արյան վերջին կաթիլը կռվել այդ հողի համար: Հային բնորոշ ու դաժան

ճակատագիր է ունեցել քաղղեկ Ավագյանը: Եվ հիմա, երբ հայկական վաշտը «հալվել», մի բուռ է դարձել, դարձել հագիվ մի դասակ, վշտից կծկվում է քաղղեկի սիրտը, ու երբ նրա կոպերի տակ մարմրում են կյանքի վերջին նշմարները դիմում է Վահանին (այս երկխոսության մեջ վեպի գաղափարն է ամփոփված).

«- Վաշտը կա, քաղղեկ, կա նրա անունը, բայց անձնակազմը գտնվում է եղբայրական գերեզմաններում: Վաշտում հիմա քսանչորս հոգի ենք ...

- Քսանչո՞րս... Այո՛, մեր վաշտը դատապարտվեց ճակատագրով: Այո՛, այո՛, լեյտենանտ, դատապարտվեց ճակատագրով, ոչ միայն մահվան, այլև անմահության ...

- Բայց անմահության չեն դատապարտվում, քաղղեկ, անմահությունը նվաճվում է, անմահությանն արժանանում են...»:

Նրա վերջին խոսքերում խտացված է վաշտի հերոսական պատմության գնահատականը. «Վաշտը, դադարում է մեր ժամանակակիցը լինելուց և դառնում է պատմություն, անմահություն, դրանով իսկ մեր և գալիք սերունդների ժամանակակիցը...»:

Պայտար Մինասը ուշագրավ կերպար է: Արհեստավոր մարդը մի կողմ է դրել խաղաղ աշխատանքը և զինվորագրվել: Հայրենի բարբառով խոսող Մինասի մոտ հումորն ու լրջությունը միահյուսված են իրար: Անհրաժեշտ պահին նա կարծես «հենց այնպես» խոսում է՝ ծիծաղի հաճելի պահեր պարգևելով ընկերներին, եթե անհրաժեշտ է՝ «լեզու» է բերում, մեկ ուրիշ դրվագում նա մի շարժումով գետին է տապալում ֆրիցին: Նա զինվորի տիպական կերպար է: Վերջին օրհասական մարտի ժամանակ, երբ վաշտը խցանվել էր կիրճում և կաթիլ-կաթիլ բաց էր թողնում սրբազան արյունը, Մինասը մեկիկ-մեկիկ գնդակահարում էր երևացող ֆաշիստներին. աղոթու՞մ էր, երդվու՞մ, վրեժխնդի՞ր էր լինում, ավելի ճիշտ՝ այդ բոլորը միասին: Ժողովրդական հերոսը նահատակվում է հերոսի նման:

Աշնակցի Հարոն այդ մարտի ժամանակ հիշում է հայկական ժողովրդական երգը և սուլթան բառի տեղ դնելով Հիտլերը՝ երգում է՝ ձայնը միացնելով ավտոմատների և գնդացիրների ձայնին:

Սարգսյանը և զգում է, և տեսնում, և գնահատում է բնությունը: Բնանկարը նրա վեպում օգտագործվում է միանգամայն նպատակային. երբեմն բնությունը շողում է իր պերճ գեղեցկությամբ, այնինչ պատերազմը խաթարում է նրա կուսական գեղեցկությունը, երբեմն այն «օգնում է» հայ մարտիկներին՝ հարված տալու թշնամուն, կամ քողարկվելու նրանից, երբեմն համահունչ է դառնում հերոսների հոգեվիճակներին: Տիեզերական շնչառության տակ պատկերվում են բնական պատկերները: Սարգսյանն իր հերոսների հոգեվիճակը դնում է բնության հովանավորության տակ՝ ստեղծելով ներդաշնակ գեղեցկություն: «Ճամփեզրին գլուխ էր թեքել զանգակածաղիկը: Մի պուտ, մի կաթիլ կապույտ երկինք՝ կանաչ ոտքերին բարձրացած: Մեղուն նեկտար էր հավաքում՝ գուրգուրելով նրա առէջը: Ծաղիկն ասես խուտուտ էր գալիս հեշտանքից: Աղջիկը չոքեց ծաղկի առջև և զարմացած նայում էր նրա թերթերին: Թվում է. ունկնդրում էր զանգակածաղկի ղողանջը, որ լսելի էր լոկ իրեն և մեկ էլ արար աշխարհին: Ծաղկաթերթերն ու աղջկա աչքերը նույն գույնն ունեին՝ գարնանով հարբած և անորոշ ծարավով առլեցուն»:

Պատերազմ է. սպանվում է մարդը, սպանվում է նաև բնության գեղեցկությունը: Մարդը և բնությունը կապված են իրար, այդ պատճառով, շոշափելիության աստիճանի, անտառն էլ անձնավորվում է և հառաչում ցավից՝ մարդու նման, իսկ կողքին տնկված է սև խաչը՝ մահվան վկան.

«Ոլորանում գլխատված է անտառը: Անտառահատների աշխատանք չէ: Անտառաեզրին բախվել են տանկերը: Ծառերն ասես քաշել են գերանդու՝ կտրտել, ջարդել, տաշել, այրել: Մի սև խաչ է խրվել փոսը...»:

Գրողը հաճախ է իր պատկերները քաղում բնությունից՝ գիտակցելով, որ բնությունն է ամենահանճարեղ քանդակագործը, որն օգնում է իրեն՝ ստեղծելու մարդու անարատ ու գեղեցիկ կերպարը՝ իր բոլոր բարեմասնություններով: Գեղեցկությունը կրթում, հղկում, ազնվացնում, բյուրեղացնում է մարդու զգացմունքները:

Երբեմն Սարգսյանն ասես հետազոտում է բնությունը՝ մարդու հույզերը նրա օգնությամբ արտահայտելու համար, մարդու հոգեկանը, տվայտանքները արտահայտիչ դարձնելու համար:

Վեպի նախավերջին գլուխը վերնագրված է «Ապոթեոզ», այսինքն մեծարում: Թեպետ ամբողջ վեպը հայկական վաշտի հերոսական «կենսագրության մեծարումն է», բայց և այնպես վերոհիշյալ ենթագլուխն ասես մեծարանքի և սիրո մի անզուգական հիմն է ծոնված հայ ժողովրդին, նրա դարավոր մաքառումներին, նրա մեծահոգությանն ու արարչագործությանը, նրա անհուն մարդասիրությանն ու կառուցման հանճարին, նրա հերոսական պատմությանը. «Քո պատմությունը, իմ ժողովուրդ, քո արյան հազարամյա հրավառությունը եղավ: Դու մի՛շտ մեծահոգի և մի՛շտ փոքրաքանակ: Դու մի՛շտ ավերակված և մի՛շտ արարչագործ: Դու մի՛շտ վիրավոր և մի՛շտ վիրաբույժ: Դու մի՛շտ ասպատակված և մի՛շտ դարավոր: Դու կու՞յս առևանգված և անխորտակ կուսություն: Դու կործանված սրբություն և անկործան հավատ: Դու մի՛շտ հայրենազուրկ և մի՛շտ հայրենաշեն: Դու հա՞ր արնաքամ և հա՞ր անպարտելի: Դու տարտարոսվա՞ծ և հավերժող աստված...»: «Ճակատագրով դատապարտվածներ» վեպին բարձր գնահատական է տվել գրականագետ Ս.Արզումանյանը. «Հիրավի, այս վեպով, նախորդ ստեղծագործություններով ու հետագա նոր որոնումներով Մ. Սարգսյանը համոզեց, որ Մեծ հայրենականի թեմատիկան գրողի իր ոլորտն է: Համենայն դեպս՝ ոչ մի այլ արձակագիր, խորհրդահայ գրականության մեջ, պատերազմի արտացոլման առումով չունի Մկրտիչ Սարգսյանի ընդգծված հետևողականությունը: Եթե կարելի է այսպես ասել՝ Մեծ հայրենականը «կաղապարեց» ու հայտնաբերեց արձակագիր Սարգսյանին: Ինչպես ռուս խորհրդային արձակում Կ. Սիմոնովին, Յու. Բոնդարևին և շատ ուրիշների»[6]:

---

1. Սովետահայ գրականության պատմություն. էջ 18, 1963թ. հրատ. II հ.:
2. «Սովետական Հայաստան», 11 ապրիլ 1968թ.:
3. «Հերոսականը և ողբերգականը», «Գրական թերթ», 3 օգոստոսի 1979թ.:
4. Կիմ Աղաբեկյան «Տարիների հետ», «Գարուն», 1980, N 12:
5. «Սովետական գրականություն» 1984թ.N 7:
6. Սևակ Արզումանյան, «Սովետահայ վեպը» հատոր 2, էջ 131: